ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հոկտեմբերի 2016թ. **N---Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2016 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.451-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականությունը համարվող Շինարարների փողոցի հ.6/1 շենքի հ.50՝ 72.8 քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.27102015-01-0125 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Մարիետա Մակարյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Շինարարների փողոցի հ.6/1 շենքի հ.50՝ 72.8 քմ մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Մարիետա Մակարյանին:

Մարիետա Մակարյանը ծնվել է Երևան քաղաքում՝ մտավորականների ընտանիքում: 1968 թվականին սովորել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետում և այնտեղ աշխատել շուրջ 33 տարի: Ուսման հետ միաժամանակ ավարտել է «Հեռուստադպրոց»-ի դասընթացները և ստացել հեռուստատեսային ռեժիսորի որակավորում: Հեռուստաթատրոնում տասնամյակների ընթացքում մասնակցել է բազմաթիվ բեմադրությունների, որոնցից անձամբ իր՝ որպես ռեժիսորի բեմադրությունները մինչ օրս պահպանվել են հեռուստատեսության «Ոսկե ֆոնդ»-ում: Շուրջ 27 տարի եղել է Քվեբեկի պետական հեռուստատեսության հայկական «Արեմենօռամա» հեռուստաժամի թղթակիցն ու մեկնաբանը, Կանադայում լույս տեսնող «Ապագայ», Բեյրութի «Զարթոնք», «Ազգակ» և «Կամար» պարբերականների թղթակիցը: Որպես լրագրող աշխատել է «Ազգ» օրաթերթում և լուսաբանել 6 տարբեր բնագավառների աշխատանքները: Աշխատել է տարբեր հիմնադրամներում՝ որպես հասարակայնության հետ կապերի պատասխանատու:

Արցախյան պատերազմի օրերին, հավաքագրել է զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների շնորհալի երեխաներին, հիմնել «Ազատամարտիկ» համույթը և համերգներով հանդես եկել ՀՀ և ԼՂՀ զորամասերում, խրամատներում և հիվանդանոցներում, որտեղ ապաքինվում էին վիրավոր ազատամարտիկները:

Պարգևատրվել է բազմաթիվ մեդալներով, պատվոգրերով և շնորհակալագրերով:

Մարիետա Մակարյանը այրի է, ունի երկու զավակ, որոնք ունեն իրենց ընտանիքները և բոլորը միասին բնակվում են Նոր Նորքի 4-րդ միկրոշրջանի 1-ին հատվածի հ.23 շենքի հ.7 հասցեում գտնվող մեկ սենյականոց բնակարանում և, ցավոք, ունեն բնակարանային պայմանների խիստ կարիքավորություն:

Հաշվի առնելով նրա անցած ուղին, ունեցած ներդրումը մշակույթի, լրատվության ոլորտում և ազգանպաստ գործունեությունը, ինչպես նաև բնակարանային պայմանների բարելավման անհրաժեշտությունը, ստեղծագործելու համար պայմաններ ապահովելու նպատակով մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ